

ա՛լ աւելի երկար եւ մանրամասն խօսելու թէ՛ հին եւ թէ՛ նոր Ձուղաներու մասին :

1700 թիւերուն Տուրնըֆօր (Tournefort) Ծրանասցի խղճամիտ եւ շրջահայեաց ուղեգիրը, որ սրաթափանց եւ հեղնող դրող մըն էր, իրական եւ անխառն գովեստով կը խօսի հայոց մասին : Հայերը աշխարհի լաւագոյն ժողովուրդը կը կոչէ եւ զանոնք կը նկատէ քաղաքավար եւ ուշիմ : Կարեւոր եւ պատմական կշռեալ տողեր կը նուիրէ հայ վաճառականութեան պատմութեան :

Սխտ կարեւոր են իր անդրադարձումները Հայոց Հին Ձուղայէն Նոր Ձուղայ բռնագաղթին : «Նախիջևեանի եւ Երեւանի շրջանի (Հայ) բնակչութիւնը թագաւորութեան (Պարսից) զանազան կողմերը ցրուեցան : Կըսեն, որ այս իշխանը (Արքաս Ա.) միայն Գիւլանի գաւառին մէջ վերաբնակեցուց 20,000 հայ ընտանիքներ, Գիւլանէն կուգայ Պարսկաստանի լաւագոյն մետաքսը» : 1)

«Շահ Արքասի միակ նպատակն էր իր թագաւորութիւնը հարստացնել : Ան համոզուած էր որ վաճառականութիւնն ատոր միակ միջոցն է, ուստի իր ուշադրութիւնը ամենաարժէքաւոր մետաքսի առեւտուրին դարձուց, ինչպէս նաեւ Հայոց իբր այդ առեւտուրին յարմարագոյն անձերը : Ան զազափար չունէր իր միւս հպատակներու կարողութեանց մասին, զիստնալով որ անոնք առեւտրական հանձար չունէին : Հայոց ժուժկալութիւնը, խնայասիրութիւնը, վարկը, մեծ ճամբորդութեանց ձեռք դարնելու եւ կատարելու եռանդը,

1) Թաւերնիէ, Տուրնըֆօրէն շատ աւելի առաջ, նոյնը կ'ըսէ՝ վկայելով, որ Շահ Արքաս Ա. «27,000 հայ ընտանիքներ Գիւլան զրկեց, ուրկէ մետաքս կուգայ, եւ ուր կլիմային խնայասիրութիւնը այս ժողովուրդէն շատեր մահացուցուց : անոնք աւելի բարեխառն օդի վարժուած էին : Հայերու ամենէն աչքառու մասը զրկուեցաւ Սպահան, ուր թագաւորը (Շահ Արքաս Ա.) զանոնք մետաքսի առեւտուրին մէջ տեղաւորեց, ապրանք փոխ տալով, որուն արժէքը անոնք (հայերը) վճարեցին չուկաներէ իրենց վերագարձին : (էջ 16)

շատ կենսական երեւցան իրեն իր ծրագիրը յառաջացնելու համար : Անոնց Քրիստոնէական հաւատքը, որ անոնց վաճառականութիւնը Եւրոպայի բոլոր ժողովուրդներուն հետ կը դիւրացնէր, կ'երեւայ թէ աւելի նպաստեց իր մըրտադրութեան : Եւ այսպէս ան մշակները վաճառական դարձուց, զանոնք այժմ աշխարհի մեծագոյն առեւտրականները ընելով» :

Տուրնըֆօր հոս կը սխալի Հայերը Շահ Արքասի կողմէ մշակէ վաճառականի վերածուած նկատելով : Շահ Արքաս արդէն գոյութիւն ունեցած հայ առեւտրական կազմակերպութիւն մըն էր որ բռնագաղթի էր մղած : Բռնագաղթին մեծ մասը բնական է որ մշակներէ բաղկացած ըլլար : Սակայն, այդ հեռատես եւ խորամանկ Շահը անոնց չյանձնեց առեւտուրը, այլ այդ մշակները տարաւ Փերիոյ, Մաղանդեբանի եւ Գիւլանի նման գաւառները, բարեկարգելու, մինչ բունի գաղթեցուցած հայ առեւտրականները Սպահան տարաւ եւ հոն տեղաւորեց :

«Այսպէս, այս իշխանը (Շահ Արքաս Ա.), որ զարմանալի կերպով հանձարեղ էր պատերազմի գործերու մէջ կամ քաղաքական կառավարութեան համար, կատարելագործեց (հայ) ժողովուրդին (առեւտրական) տաղանդը եւ իր թագաւորութեան առեւտուրը : Եւ առեւտուրը աւելի լաւ հիմնելու ու ամրացնելու համար, Նոր Ձուղայի հայոց վատահեցաւ որոշ քանակութեամբ մետաքսի հակեր, կարաւաններով տարուելու համար օտար երկիրներ, մինչեւ իսկ Եւրոպա, սա միակ պայմանով որ իրենք (հայերը) անձամբ պէտք է ընկերանան ապրանքին, իսկ իրենց վերադարձին, իրենց մեկնումէն առաջ դատաւորներու որոշած սակին համաձայն, այդ հակերուն փոխարժէքը պէտք է վճարեն : Եւ որպէսզի զանոնք առեւտուրին մէջ քաջալերէ, ան թոյլատրեց, որ իրենց վերապահեն մետաքսին նախապէս որոշեալ սակէն դուրս ինչ որ շահին : Եւ յաջողութիւնը պատասխանեց իշխանին եւ իր վաճառականներու յոյսերուն : Թէեւ այժմ իսկ մետաքսը Պարսկաստանի լաւագոյն ապրանքն է, սակայն այն ատեն աւելի արժէքաւոր էր : Այն ատեն հազիւ թէ թթենիներ զո-